ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ, ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԵՎ ՏԱՐԲԵՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՎ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՈՒԹ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Մշակվել և 2017 թվականի հունիսի 16-ի N 01/11.2/3552-17 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: 2017 թվականի հուլիսի 6-ի N 02/24.8/15468-17 հանձնարարականի շրջանակներում նախագիծը ներկայացվել է համապատասխան նախարարություններ՝ կարգավորման ազդեցության գնահատման նպատակով: 2017 թվականի օգոստոսի 17-ին հանրային քննարկման նպատակով նախագիծը տեղադրվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքում: 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 01/11.2/5459-17 գրությամբ լրամշակված նախագիծը կրկին ներկայացվել է ՀՀ կառավարություն: Որոշման մեջ փոփոխություն կատարելու նպատակն է՝ օպտիմալացնել փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման ընթացակարգերը, հանրային քննարկումների գործընթացը, ստեղծել համաձայնեցման և միջգերատեսչական հանձնաժողովի արդյունավետ ու գործընթացին աջակցող մասնակցության համակարգ, հնարավորինս հստակեցնել փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները:

- Գործարկվել է քաղաքաշինության ոլորտում թույլտվությունների առցանց տրամադրման էլեկտրոնային համակարգը (www.e-permits.am), որի աշխատանքների իրականացման նպատակով ձեռք է բերվել համակարգի սպասարկման ծառայությունը: Իրականցվում են թույտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ընթացիկ սպասարկման աշխատանքները: Նախագծման թույլտվության հայտի ու շինարարության թույլտվության դիմումի էլեկտրոնային համակարգի կողմից գեներացվող ձևերը համապատասխանեցվել են գործող ձևաթղթերի հետ:

Քաղաքաշինության ոլորտի թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի հնարավորության առկայության և դրա առավելությունների վերաբերյալ լայնամասշտաբ իրազեկման աշխատանքների իրականացման շրջանակներում գործարկված է www.cpms.e-permits.am աշխատանքային գործիքը, որտեղ մուտք գործելու հնարավորություն է ընձեռում www.e-permits.am կայքը «ՄՈՒՏՔ» պատուհանի միջոցով: Կայքն ու ուղեցույցը հասանելի են

ինչպես ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի պաշտոնական www.minurban.am կայքի գլխավոր էջում տեղադրված «Քաղաքաշինության ոլորտում թույլտվությունների ստացում» պատուհանում, այնպես էլ՝ www.e-permits.am կայքում:

- 2017-2021 թվականների ընթացքում հանրապետության բնակավայրերի գլխավոր հատակագծերով ապահովելու ամբողջական լուծում ծրագրի շրջանակներում համակարգվում է ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների 6 խմբերի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացը: Ներկայացվել են պետական գնման պայմանագրերի 1-ին փուլի աշխատանքների մշակումներն ըստ տեխնիկական բնութագրերի: Պատասխանատու ստորաբաժանման կողմից նախագծային աշխատանքների 1-ին փուլին տրվել է դրական եզրակացություն:

Գլխավոր հատակագծերի վերաբերյալ, ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություններ են տրվել ՀՀ Արարատի մարզի 10, ՀՀ Կոտայքի մարզի 5 և ՀՀ Գեղարքունիքի մարզի 2 համայնքների:

- Մշակվել և 2017 թվականի հունիսի 1-ին հաստատվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N605-Ն որոշումը, այն համապատասխանեցնելով «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությունների հետ:

- Մշակվել և շահագրգիռ մարմինների համաձայնեցմանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N792-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ընթացակարգերը պարզեցնելու նպատակով): Այնուհետև այն հետաձգվել է մինչև «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման հաստատումը:

- Մշակվել և ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 23-ի N280-Ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագիծը (փոփոխություններ են կատարվել ինժեներական ենթակառուցվածքների անցկացման ընթացակարգերի պարզեցման մասով):

- Մշակվել և 2017 թվականի օգոստոսի 21-ի N 01/11.1/5235-17 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (Նախագծման թույլտվության մեջ լրացում կատարելու նպատակն է նախագծային փաստաթղթերի միջոցով կանոնակարգել կառուցվող շենքերի ճարտարապետական ոճերը, ճակատային լուծումներն ու դրանց շեշտադրող տարրերը, հորինվածքները, զարդաքանդակները, արտաքին դռների ու պատուհանների համաչափությունները և տանիքների ներդաշնակ գունային լուծումները:):

- Մշակվել և ՀՀ վարչապետի 2017 թվականի մարտի 2-ի N 199-Ա որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը (փոփոխությունները կապված են ՀՀ կառավարության վերակազմավորման և հանձնաժողովի անդամների փոփոխության հետ):

- Մշակվել և ՀՀ վարչապետի 2017 թվականի ապրիլի 10-ի N347-Ա որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 22-ի N1075-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը (ճշգրտվել է պատասխանատու կատարողների և համակատարողների ցանկը):

- Կառուցապատման ընթացակարգերի մասին քաղաքաշինական գործունեություն իրականացնող սուբյեկտների իրազեկվածության բարձրացման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից թարգմանված «Կառուցապատողի ուղեցույցի» ռուսերեն և անգլերեն տարբերակները տեղադրվել են ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի՝ www.minurban.am պաշտոնական կայքի «Կառուցապատողի ուղեցույց» ենթապատուհանում: Գործարկվել է քաղաքաշինության ոլորտում թույլտվությունների առցանց տրամադրման էլեկտրոնային համակարգը (www.e-permits.am), որի աշխատանքների իրականացման նպատակով ձեռք է բերվել համակարգի սպասարկման ծառայությունը: Համակարգը մշակող կազմակերպության ներկայացուցչի մասնակցությամբ կազմակերպվել են հանդիպումներ՝ համակարգի ընձեռած հնարավորությունները և առավելությունները ներկայացնելու նպատակով: Իրականցվում են թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ընթացիկ սպասարկման աշխատանքները: 2017 թվականի ապրիլի 20-ի N01/11.3/2142-17 գրությամբ «Գազպրոմ Արմենիա», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերություններին՝ էլեկտրոնային համակարգի կիրառման համար պատասխանատու մասնագետներ նշանակելու համար: Նախագծման թույլտվության հայտի ու շինարարության թույլտվության դիմումի էլեկտրոնային ձևերի և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված ձևաթղթերի միջև առկա անհամապատասխանությունները շտկվել են, նշված հայտի և դիմումի էլեկտրոնային համակարգի կողմից գեներացվող ձևերը համապատասխանեցվել են գործող ձևաթղթերի հետ: Աշխատանքային հանդիպում է կազմակերպվել շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ համակարգի միջոցով նախագծման թույլտվություն ստանալու ընթացքում առաջացած տեխնիկական խնդիրներին համապատասխան լուծումներ տալու նպատակով: Պարզաբանումներ են տրվել քաղաքացիներից ստացված հեռախոսազանգերին, ինչպես նաև, որպես տեխնիկական աջակցություն՝ քաղաքացու կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով նախագծման թույլտվության հայտ ներկայացնելու համար կազմվել է պահանջվող փաստաթղթերի փաթեթը և ներբեռնվել համակարգ:

Ներկայացվել են հաշվետվություններ՝

- «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2017 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ «Շինարարության թույլտվություններ» մասի կատարման ընթացքի վերաբերյալ:

- ՀՀ փոխվարչապետի 2013 թվականի օգոստոսի 22-ի N01/16/4515-13 հանձնարարականին համապատասխան՝ ՀՀ համայնքների գլխավոր հատակագծերի մշակման և դրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ ամենամսյա հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման շրջանակներում իրականացվել են՝

«Միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման ծրագրի» իրականացման շրջանակներում համակարգվում է ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների 6 խմբերի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացը: 2017 թվականի հունիսի 15-ին կոմիտե են ներկայացվել պետական գնման պայմանագրերի 1-ին փուլի աշխատանքների մշակումներն ըստ տեխնիկական բնութագրերի: Պատասխանատու ստորաբաժանման կողմից նախագծային աշխատանքների 1-ին փուլին տրվել է դրական եզրակացություն:

Համակարգվում են համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի մշակման, դրանցում փոփոխությունների կատարման աշխատանքները և կազմակերպվում ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքները:

- Հանձնաժողովի դրական եզրակացություններ են տրվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ, ՀՀ Արարատի մարզի Ռանչպար, Նիզամի, Սիս, Ավշար, Դարբնիկ Մարմարաշեն, Գետափնյա, Ազատավան, համայնքների գլխավոր հատակագծերի նախագծերին և ՀՀ Արարատի մարզի Մասիս, ՀՀ Կոտայքի մարզի Գողթ, Գետամեջ, Կարենիս, Ջրաբեր համայնքների գլխավոր հատակագծերի նախագծերի առաջադրանքներին:

- Հանձնաժողովի դրական եզրակացություններ են տրվել ՀՀ Կոտայքի մարզի Գեղադիր, Արամուս, ՀՀ Արարատի մարզի Արբաթ համայնքների գլխավոր հատակագծերի նախագծերին:

- ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան Այնթապ, ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան, համայնքների գլխավոր հատակագծերի նախագծերը լրամշակման փուլում են:

- Հանձնաժողովի դրական եզրակացություններ են տրվել Երևանի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճք, Լճաշեն, Աղբերք, Ծակքար, Գեղարքունիք, Շորժա, Ծափաթաղ, Երանոս, ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ, Պռոշյան, Գեղաշեն, Զովունի, Հրազդան, Գառնի, Քանաքեռավան, Ձորաղբյուր, Արտավազ, Զորավան, ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ, Գորիս, Սիսիան, Մեղրի, ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արենի, Ջերմուկ, ՀՀ Արարատի մարզի Նորաբաց, Արևշատ, Քաղցրաշեն, Մասիս, ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ, Սայաթ-Նովա, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան, ՀՀ Արագածոտն մարզի Թալին, Ապարան, ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Մարալիկ, Արթիկ համայնքների գլխավոր հատակագծերի փոփոխություններին:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՈԼՈՐՏ

«Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N449-Ն որոշմամբ,

«Աղետի գոտու քաղաքային բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների ոչ հիմնական շինությունները փաստագրելու, ազատելու և հեռացնելու կարգը հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N317 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը գտնվում է շահագրգիռ կողմերի հետ քննարկման փուլում,

ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N1060-Ա և 2017 թվականի հունիսի 19-ի N646-Ա որոշումներով հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրերի համաձայն՝

երկրաշարժի հետևանքով աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի մասով՝ շարունակվել է ծրագրի իրականացումը, որի շրջանակներում՝ հաշվետու ժամանակաշրջանում,

- ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված 560.0 մլն. ՀՀ դրամի շրջանակներում բնակարանային խնդիրների լուծման նպատակով ֆինանսական աջակցություն (բնակարանի գնման վկայագրի միջոցով, կամ ուղղակի) է տրամադրվել 86 ընտանիքի, որով ավարտվել է ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքում ձևավորված պետական պարտավորությունների կատարումը:

- ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում կառուցված 258 բնակելի տները՝ Ծրագրի շահառուներին հանձնելու նպատակով, ամրացվել են ՀՀ Լոռու մարզպետարանին, որպեսզի վերջինս՝ նվիրատվության պայմանագրերի հիման վրա դրանք տրամադրի շահառուներին:

- Սպիտակ քաղաքի Վարպետաց և Գյումրի քաղաքի Մուշ-2-2 ու Անի թաղամասերի բնականոն շահագործումն ապահովելու նպատակով այդ թաղամասերում կառուցված կոմունիկացիոն համակարգերը հանձնվել են համայնքներին (ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N812-Ա որոշում):

- Ծրագրի շրջանակներում կառուցված, սակայն դեռևս Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բնակարանների ցանկը և ներկայումս մշակման փուլում է գտնվում այդ բնակարանները համապատասխան համայնքներին հանձնելու մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը:

- Մշակվել է ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում Ծրագրի շահառուների համար բնակելի տան կառուցման նպատակով կառուցապատողի կողմից ձեռք բերված և դեռևս կառուցապատողի սեփականությունը հանդիսացող տնամերձ հողամասերը՝ դրանց վրա կառուցապատողի կողմից արված բարելավումներով հանդերձ, նախկին սեփականատերերին վերադարձնելու գործընթացի իրականացման քայլերի ժամանակացույց:

Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի պահպանմանն ու շահագործմանը վերաբերող խնդիրների կանոնակարգման նպատակով իրականացվել են անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման և ամփոփման աշխատանքներ, մշակվել են առաջարկություններ, որոնց հիման վրա ՀՀ վարչապետի 2016 թվականի փետրվարի 5-ի N44-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական խմբի աշխատանքների շրջանակներում մշակվել է նաև «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Համատիրության մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ Կոմիտեի կողմից առաջարկվող տարբերակը:

Հանրապետության 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքերի թվի հստակեցման նպատակով դրանց տեխնիկական վիճակի նոր հետազննություն անցկացնելու համար ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ ճշտվել և ամփոփվել է 2017 թվականի դրությամբ առկա՝ 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Նախապատրաստական աշխատանքներ են տարվել ՄԱԿ ԵՏՀ-ի և ՄԱԿ-Հաբիթաթի աջակցությամբ մշակված և ՄԱԿ ԵՏՀ-ի բնակարանային և հողերի կառավարման կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի 13-ից 16-ը կայացած 77-րդ նստաշրջանում հաստատված՝ Հայաստանի Երկրի նկարագրի ներկայացման, ինչպես նաև դրանում արված առաջարկությունների հիման վրա մշակված գործողությունների պլանի քննարկման նպատակով 2017 թվականի սեպտեմբերի 11-ին նախատեսված՝ «Հայաստանի կայուն բնակարանային տնտեսության, քաղաքաշինության և հողերի կառավարման բնագավառներում առկա միտումները և մարտահրավերները» թեմայով աշխատաժողովի կազմակերպման ուղղությամբ:

Միջազգային համագործակցության շրջանակներում մասնացություն է ցուցաբերվել բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման խնդիրներին ուղղված մի շարք աշխատաժողովների և քննարկումների:

Վարչության գործառույթներին առնչվող խնդիրների (աղետի գոտի, բազմաբնակարան շենքերի կառավարում, վթարային բնակֆոնդ, տնակային ավաններ և այլն) վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, փաստաբանների, հասարակական կազմակերպությունների, և այլոց կողմից բարձրացված հարցերի, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հետ կապված տրվել են մոտ 520 պարզաբանումներ:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (շինարարական նորմեր, կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր, կանոններ) մշակում, վերանայում, տեղայնացում՝

«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», «Պողպատե կոնստրուկցիաներ», «Հասարակական շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերի և «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» ՀՀ շինարարական նորմերի մշակումն իրականացնող կազմակերպությունների հետ կնքվել են գնման պայմանագրերը:

- Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի վերանայման նպատակով մշակվել և Կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 4-ի N 03/14.2/4927-17 գրությամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի Հայաստանի գրասենյակներ են ներկայացվել Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև կնքված վարկային համաձայնագրի սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրին աջակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության սեյսմակայուն շինարարության գործող նորմերը միջազգայնորեն ընդունված սկզբունքներին ու պահանջներին համապատասխանեցնելու և համեմատական վերլուծություն կատարելու տեխնիկական առաջադրանքի նախագիծը: ՀՀՇՆ II–6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն.

Նախագծման նորմերի» վերանայման աշխատանքների իրականացման համար գրություն է ուղարկվել Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակ՝ Հայաստանի Հանրապետության տարածքի երկարաժամկետ սեյսմիկ վտանգի հավանականային գնահատմամբ նոր քարտեզից բխող ելակետային տվյալների և բնութագրերի վերաբերյալ նախնական տեղեկատվություն ներկայացնելու համար:

- Շինարարական աշխատանքների գնագոյացման մեթոդաբանության արդիականացում և շինարարական աշխատանքի արժեքի հաշվարկման սկզբունքների ձևավորում գերակա խնդրի լուծման նպատակով ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 2017 թվականի մայիսի 6-ի N 01/14.1/2517-17 գրությամբ ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը լրացուցիչ քննարկման նպատակով վերադարձվել է:

Լրացուցիչ քննարկումներից հետո հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունները և առաջարկությունները լրամշակված որոշման նախագիծը 2017 թվականի օգոստոսի 24-ի 01/14.1/5310-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

- «Հայաստանի Հանրապետությունում կիսակառույցների շինարարության ավարտման և հետագա օգտագործման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը՝ համաձայնեցված պետական կառավարման մարմինների հետ, և ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 2017 թվականի մայիսի 31-ի N 01/14.1/3173-17 գրությամբ ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացված Նախագիծը, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից քննարկման է ուղարկվել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն և <<Հայաստանի ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամ: Ներկայումս ուսումնասիրվում և ամփոփվում են ստացված կարծիքները, որից հետո Նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

- Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումների համաձայն իրականացվում է Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման Ծրագիր.

Ծրագիրն իրագործվում է փուլային սկզբունքով՝ 2014 թվականից՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի N 6/1, 2016 թվականից Ադոնց փողոցի N 6/2 և 2016 թվականի նոյեմբերի 18-ից N 6 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրների շինարարական աշխատանքների մեկնարկով:

Ադոնց փողոցի N 6/1 հասցեում ընդհանուր թվով 266 (I փուլ՝ 105, II փուլ՝ 135 և III փուլ՝ 26) բնակարանների բաշխումն իրականացվել է վիճակահանության երեք փուլերի իրագործմամբ, պայմանագրային արժեքը՝ 7,062,887.861հազ.դրամ: Ներկա փուլում շահառուների հետ կնքվում են Ադոնց փողոցի N 6/1 հասցեում կառուցված բազմաբնակարան համալիրի 266 շահառուների անշարժ գույքի առուվաճառքի հիմնական պայմանագրերը:

Ադոնց փողոցի N 6/2 հասցեում ընդհանուր թվով 175 բնակարանների բաշխումն իրականացվել է վիճակահանության մեկ փուլով, պայմանագրային արժեքը՝ 4,707,895.605 հազ.դրամ: Ամբողջապես հարդարված բազմաբնակարան համալիրի ավարտը նախատեսվում է 2018 թվականի դեկտեմբերին:

Ադոնց փողոցի N 6 հասցեում ընդհանուր թվով 294 բնակարանների բաշխումն իրականացվել է վիճակահանության մեկ փուլով:

Կնքման փուլում են գտնվում Ադոնցի փողոցի N 6 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի 294 շահառուների անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրերը:

- Մշակվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագիծը, որով նախատեսվում է իրականացնել 5 072 000.0 հազար ՀՀ դրամ գումարի շինարարական աշխատանքներ ընդամենը 34 օբյեկտ, այդ թվում՝ կրթական 21, մշակութային 6, մարզական 4, բնակարանային 1 և վարչական 2:

- ՀՀ Նախագահի 2008 թվականի հուլիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի հունվարի 10-ից փետրվարի 17-ը Հայաստանի Հանրապետության մարզերում և համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում արծարծված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մասին>> N ՆԿ–128–Ն կարգադրության, ՀՀ Նախագահի 2013 թվականի օգոստոսի 21-ի N Ղ-1414 և ՀՀ Նախագահի 2016 թվականի մարտի 29-ի N Ղ-472 հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ 2017 թվականի 1-ին կիսամյակում ներկայացվել է ընդհանուր թվով 5 հաշվետվություն՝ այդ թվում 2 հաշվետվություն ներկայացվել ՀՀ կառավարություն, 1 եռամսյակային հաշվետվություն ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և 2 եռամսյակային հաշվետվություն՝ ՀՀ Նախագահի աշխատակազմ: Ընդ որում 2017 թվականին կավարտվեն թվով 3 կրթական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը:

- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի օգոստոսի 23-ի N 118-Ա հրամանով, սահմանված կարգով, հավանություն է տրվել Համաշխարհային բանկի «Աղետների և դրանց հետևանքների նվազեցման գլոբալ նախաձեռնության» «Անվտանգ դպրոցներ» ծրագրի տեխնիկական աջակցության շրջանակներում մշակված «Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող դպրոցական շենքերի սեյսմակայուն վերակառուցման և նոր դպրոցական շենքերի նախագծման ուղեցույցին»:

- ՀՀ վարչապետի 2017 թվականի մայիսի 5-ի N 02/24.8/10736-17, 2017 թվականի մայիսի 17-ի N 02/24.9/[405486]-17 և 2017 թվականի օգոստոսի 15-ի N 02/24.8/18571-17 հանձնարարականների համաձայն շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում լրամշակվել է «Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության բարձրացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը և Կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 23-ի N 01/14.2/5275-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:

- Մշակվել և սահմանված կարգով ներկայացվել է «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում», «Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրերի 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի հայտերը:

- Մշակվել է «ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու և մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաճելու մասին» հրամանի նախագիծը, որը հաստատվել է ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի ապրիլի 13–ի N 56-Ն հրամանով և սահմանված կարգով պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

- Եվրասիական տնտեսական միությանն (ԵՏՄ) անդամակցության շրջանակներում քննարկվել և կարծիքներ են ներկայացվել մի շարք փաստաթղթերի, այդ թվում ԵՏՄ «Մանկական խաղահրապարակների համար սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի նախագծի փաստաթղթերի փաթեթի վերաբերյալ,

- Եվրասիական տնտեսական միության /ԵԱՏՄ/ «Շենքերի և շինությունների, շինարարական նյութերի և արտադրանքների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի նախագծի վերաբերյալ,

- «ԱՊՀ մասնակից պետությունների համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող շինարարական նախագծերի փորձաքննության մասին», «ԱՊՀ քաղաքաշինական խարտիան» և «Շինարարությունում միջպետական նորմատիվային փաստաթղթերի համակարգի ընդհանուր սկզբունքների մասին» Համաձայնագրերի վերաբերյալ,

- ԱՊՀ անդամ-պետությունների մինչև 2020 թվականը ժամանակահատվածի համար միջտարածաշրջանային և սահմանային համագործակցության Հայեցակարգի և դրա իրագործման միջոցառումների Պլանի վերաբերյալ:

- Իրականացվել է թվով 5 միջպետական ստանդարտների փորձաքննություն:

- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահին կից ինժեներատեխնիկական հանձնաժողովի նիստերում կազմակերպվել են «Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ԱՊԸ-ի կողմից առաջարկված շենքերի պատող կոնստրուկցիաների համար նոր տիպի ջերմամեկուսիչ պատի կոնստրուկտիվ լուծումների, տեխնոլոգիական առանձնահատկությունների, տեխնիկատնտեսական ցուցանիշների և Ասիական զարգացման բանկի «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» իրականացման շրջանակներում նախագծված մոդուլային դպրոցների նախագծերում կիրառության հնարավորության հարցի, «Ամուռկավ» ապրանքային անվանմամբ ջերմաձայնամեկուսիչ արհեստական կերամիկական քարից պատրաստվող մոդուլային տիպի տների («Նոր տուն»), Սեյսմակայուն շինարարության հայկական ասոցիացիայի նախագահ Մ. Մելքումյանի կողմից ներկայացված նոր կառուցվող և վերակառուցվող (ուժեղացվող) շենքերում սեյսմամեկուսացման համակարգերի ներդրման առավելությունների, տնտեսական շահավետության և դրանց լայնորեն կիրառման հնարավորությունների, «Օնիքս ԳԸ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բազալտե և ապակե մանրաթելերի հենքի վրա փուլթրուզիոն եղանակով արտադրվող բազալտեպլաստե և ապակեպլաստե շինվածքների ու կոնստրուկտիվ տարրերի արտադրության ներդրման, «Արջերմեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բազալտե նուրբ մանրաթելերի հենքի վրա ջերմամեկուսիչ նյութերի արտադրության ընդլայնման և կիրառության, ինչպես նաև «Արգել» ՓԲԸ-ի կողմից բազալտե մանրաթելերից ոչ մետաղական կոմպոզիտային ամրանների արտադրության ընթացքի և փորձարկման արդյունքների վերաբերյալ քննարկումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և համապատասխան առաջարկություններով ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ:

Մասնակցություն է ցուցաբերվել.

- Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ) և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից «Հայաստանի Հանրապետությունում սողանքային աղետի կառավարում» ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N 941-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքներին,

- Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի հավանականային գնահատմամբ նոր շրջանացման քարտեզի կազմման և «Հայաստանի Հանրապետությունում առկա դպրոցների սեյսմակայունության բարձրացման և նոր դպրոցների նախագծման ուղեցույցի» մշակման աշխատանքների քննարկումներին,

- «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման» ծրագրի շրջանակներում ՄԱԶԾ-ԳԵՖ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մշակվող մոդուլային դպրոցների

նախագծային առաջադրանքի մշակման աշխատանքներին և նախագծային առաջարկների քննարկումներին,

- «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ՏՀ-16 «Շինարարություն, շինարարական կոնստրուկցիաներ և շինանյութեր» տեխնիկական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետությունում ոլորտի սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման Խորհրդի ու տեխնիկական կոմիտեի նիստի աշխատանքներին:

- Շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ աշխատանքներ են տարվում ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերի վերանայման և փոխհամաձայնեցված լուծումներ սահմանելու ուղղությամբ:

- ՀՀ գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և ֆիզիկական անձանց կողմից ստացված գրությունները քննարկվել և համապատասխան գործընթացներ են ապահովվել հանրապետությունում տարբեր վնասվածության աստիճան ունեցող, ինչպես նաև սողանքային և քարաթափերի վտանգավոր գոտիներում գտնվող շենքերի պահպանման ու անվտանգ շահագործման, բնակիչների բնակարանային խնդիրների լուծման ուղղությամբ:

ՆԵՐԴՐՈՒԹՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Կառուցապատման ներդրումային ծրագրերի մշակում» գերակա խնդրի կատարման շրջանակներում կոմիտեի կողմից համակարգվել են հետևյալ ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքները՝

- Երևան քաղաքի 33-րդ թաղամասի (ներկայիս Ֆիրդուսի շուկայի տարածք) կառուցապատման ներդրումային ծրագիր.

Թաղամասի կառուցապատման Ծրագրով նախատեսվում է իրականացնել հասարակական նշանակության և բնակելի կառուցապատման օբյեկտների, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակցության նոր ուղիների կառուցումը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 3-4 տարում: Ներկայումս մշակվել է թաղամասի կենտրոնական հրապարակի նախագիծը, ընթանում են տարածքի իրացման աշխատանքներն ու առանձին հատվածների հողային աշխատանքները:

- Երևան քաղաքում հայկական ազգագրական «Նոյ» թաղամասի ներդրումային ծրագիր.

Ծրագրով նախատեսվում է «Դալմա Գառդեն Մոլ» առևտրազվարճային համալիրին հարող տարածքում ստեղծել Հայաստանի տարբեր տարածաշրջանների բնակավայրերի ավանդույթներին ու ճարտարապետական դիմագծին բնորոշ ազգագրական թաղամաս: Ներկայումս ընթանում են ինժեներական ենթակառուցվածքների նախագծերի մշակման աշխատանքները:

- Երևան քաղաքում «Հին Երևան» կառուցապատման ներդրումային ծրագիր.

Գլխավոր պողոտայի մոտ 2.2 հա մակերեսով տարածքում (Աբովյան-Փ.Բուզանդ-Ե.Կողբացի-Արամի փողոցներով սահմանափակվող հատված) նախատեսվում է իրականացնել 19-20-րդ դարերի ճարտարապետական քաղաքաշինական միջավայրի վերականգնումը՝ պատմական կառույցների հիմնական ֆոնդում ներառված և ներկայումս ապամոնտաժված կամ տեղափոխման ենթակա կառույցներով: Ծրագրում ներառված տարածքի իրացված մասերում առաջիկայում կսկսվեն հողային աշխատանքներ:

Ներդրումային ծրագրերի կառավարում, համակարգում, վերահսկողություն և մոնիթորինգ

- ՀՀ կառավարություն են ներկայացվել և կոմիտեի կողմից համակարգվում են թվով 43 կառուցապատման ներդրումային ծրագրեր, որոնցից 21 ներդրումային ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է մասնավոր ներդրողների կողմից, իսկ 22-ի ֆինանսավորումն իրականացվում է պետական միջոցների հաշվին:

- Կոմիտեի պատվիրատվությամբ Երևանի Աբովյան հրապարակին հարող զբոսայգու հարակից տարածքում իրականացվում է «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնի կառուցումը:

- Համակարգում է Երևանի Կենտրոն վարչական շրջանում Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի և Մուշեղ Իշխանի անվան N5 դպրոցին հարակից տարածքում բազմաբնակարան շենքի և Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի շենքի նախագծային աշխատանքները:

- Ջերմուկ քաղաքում լայնամասշտաբ բարեկարգման ծրագրերի իրականացման շրջանակներում կոմիտեի կողմից համակարգվում է Բնական թերմալ ջրերի փակ և բացօթյա լողավազանային համալիրով SPA կենտրոնի և երկու հյուրանոցային համալիրների կառուցման ներդրումային ծրագիրը: Ներկայումս ընթանում են նշված օբյեկտների նախագծման աշխատանքները:

Ներկայացվել են առաջարկություններ՝

- Սևան ազգային պարկի» բարեփոխումների և զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող «Սևան» ազգային պարկի տարածքում կառուցապատման կանոնակարգմանն առնչվող խնդիրների վերաբերյալ:

- Ջերմուկ քաղաքը «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքին կապող ճանապարհի կառուցման վերաբերյալ:

- Գյումրու պատմական կենտրոնի զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվող Գյումրու «Կումայրի» պատմաճարտարապետական հատվածի՝ Շիրազի և Ռուսթավելու փողոցների վերականգնման վերաբերյալ:

- Երևանից-Զվարթնոց օդանավակայան ավտոճանապարհի բարելավմանն առնչվող խնդրի վերաբերյալ: Հաշվի առնելով նշված ճանապարհահատվածի ծանրաբեռնվածությունն ու տրանսպորտային հոսքերի անհավասարաչափ բաշխվածությունը, առաջարկվում է իրականացնել 3680մ ընդհանուր երկարությամբ շրջանցիկ ճանապարհի կառուցում, որի արդյունքում կբեռնաթափվի և կկրճատվի Երևանից դեպի օդանավակայան և Էջմածին տանող ճանապարհը:

Առաջարկությունը նպատակաուղղված է զարգացնելու ենթատարածաշրջանային և պետական տրանսպորտային ցանցը, բարելավելու ճանապարհային ենթակառուցվածքը, ճանապարհային ցանցի կառավարման կարողությունն ու ճանապարհների անվտանգությունը:

Միջազգային համագործակցություն.

ՀՀ Կառավարության աշխատակազմ են ներկայացվել առաջարկություններ՝

- ՀՀ վարչապետի կողմից Թուրքմենստան, Իրանի Իսլամական Հանրապետություն, Վրաստանի Հանրապետություն, Ուզբեկստանի Հանրապետություն և մի շարք այլ երկրներ նախատեսվող այցի շրջանակներում քննարկվելիք հարցերի վերաբերյալ,

- Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիայի (ԱՍԲԱ) կողմից Հուշագրի վերամշակված տարբերակի վերաբերյալ,

- ՀՀ կառավարության աշխատակազմ՝ ԱՊՀ անդամ-պետությունների համագործակցության միջկառավարական խորհրդի հերթական 38-րդ նստաշրջանը անցկացնելու վերաբերյալ:

Տրամադրվել է տեղեկատվություն՝

- «Вестник» ամսագրին 2016 թվականին ՀՀ-ում շինարարության ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ,
- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 8-րդ նիստի և Էներգետիկ Խարտիայի զեկույցի վերաբերյալ,
- ԱՊՀ միջկառավարական խորհուրդ՝ ԱՊՀ անդամ պետությունների կողմից շինարարության ոլորտի պայմանագրերի և համաձայնագրերի վավերացման վերաբերյալ,
- ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ ՀՀ Նախագահի ԱՄԷ կատարած այցի արդյունքներով կազմված ՀՆԱ-8 հանձնարարականի կատարման վերաբերյալ և Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կայուն զարգացման հարցով տարածաշրջանային 2011-2015 թվականների ծրագրի հարցաշարի վերաբերյալ,
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը՝ «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման մեջ ՀՀ դիրքի բարելավման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ և Համաշխարհային բանկին՝ իրականացված բարեփոխումների և ԵՏՄ Ազատականացման ծրագրերի վերաբերյալ,
- ՀՀ արդարադատության նախարարություն՝ «Հայաստան-ՆԱՏՕ 2017-2019 թվականների Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» 1.3. բաժնի 1.3.4. ենթաբաժնի (Գործողություն 1) 2017թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների մասին:

ՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թվականի ութ ամիսների ընթացքում ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից ըիրականացվել է շինարարական օբյեկտներում 2 ստուգում՝ ըստ անհրաժեշտության և կայացվել է 2 որոշում ֆիզիկական անձանց նկատմամբ, նշանակվել է 700 հազ. դրամ տուգանք, որը ամբողջովին մուտքագրվել է պետական բյուջե:

Շինարարության թույլտվություն տվող իրավասու մարմինների կողմից ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման պահանջներին համաձայն 2017 թվականի ութ ամիսների ընթացքում քաղաքաշինական պետական տեսչությանը ներկայացվել է 1695 շինարարության և 75 քանդման թույլտվությունների, 446 շինարարության ավարտական ակտերի /շահագործման թույլտվության/ պատճեններ և թվով 657 Ձև N5 տեղեկանք:

ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, տարբեր կազմակերպություններից և անհատներից ստացվել են 3179 գրություններ, դիմում-բողոքներ և հեռախոսազանգեր՝ քաղաքաշինության բնագավառում վիճահարույց հարցերի վերաբերյալ:

Ստացված հանձնարարականների, գրությունների և դիմումների համաձայն քաղաքաշինական պետական տեսչության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքների հիման վրա տրվել են սպառիչ պատասխաններ, իսկ առանձին դեպքերում համապատասխան գրություններ են ուղարկվել համայնքների ղեկավարներին, խախտումներ հայտնաբերված շինարարական օբյեկտների շինարարության թույլտվության գործողության կասեցման վերաբերյալ:

Քաղաքաշինական պետական կոմիտեում գործում է „Թեժ գիծ”, որով քաղաքացիները հնարավորություն են ունեցել հայտնել կամ ստանալ տեղեկություններ հանրապետության տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության վերաբերյալ: ,,Թեժ գծով,, քաղաքացիների կողմից 2017 թվականի ութ ամիսների ընթացքում ստացված 10 ահազանգի հիման վրա քաղաքաշինական պետական տեսչության կողմից իրականացվել են ուսումնասիրություններ և տրվել սպառիչ գրավոր պատասխաններ:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2017 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ քաղաքաշինության բնագավառում գործում են մոտ 2493 կազմակերպություն, որոնք ունեն թվով 2908 լիցենզիաներ և թվով 5349 ներդիրներ, այդ թվում՝

- շինարարության իրականացում՝ 1950 լիցենզիա՝ 3607 ներդիրներով,
- քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ 609 լիցենզիա՝ 1198 ներդիրներով,
- շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ 258 լիցենզիա՝ 544 ներդիրներով,
- ինժեներական հետազննություն՝ 50 լիցենզիա,
- շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն՝ 41 լիցենզիա:

2017 թվականի ութ ամիսների ընթացքում տրամադրվել են թվով 143 լիցենզիաներ և թվով 305 ներդիրներ, այդ թվում՝

- շինարարության իրականացում՝ թվով 104 լիցենզիա՝ 193 ներդիրներով,
- քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ թվով 29 լիցենզիաներ՝ 74 ներդիրներով.
- շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ թվով 9 լիցենզիաներ՝ 30 ներդիրներով,
- ինժեներական հետազննություն՝ թվով 1 լիցենզիա և թվով 6 լիցենզիային կից ներդիրներ,
- շենք-շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն՝ թվով 2 լիցենզիաներին կից ներդրներ:

Վերաձևակերպվել են՝ թվով 5 լիցենզիաներ և թվով 6 ներդիրներ:

Փոխարինվել են՝ թվով 57 ներդիրներ:

Դադարեցվել են՝ թվով 61 լիցենզիաներ և թվով 110 ներդիրներ՝ լիցենզավորված անձանց դիմումի համաձայն:

2017 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ ՀՀ պետական բյուջե մուտք է եղել 239.45 մլն. դրամ լիցենզիաների տարեկան պետական տուրք:

Լիցենզիաների տարեկան պետական տուրքը չվճարելու պատճառով կասեցվել են թվով 517 լիցենզավորված անձանց թվով 6 լիցենզիաներ և թվով 718 ներդիրներ:

ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ անց է կացրել առանձնացված շտաբային մարզում:

Մասնակցել է ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործող պլանի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված բոլոր շտաբային և հրամանատարաշտաբային ուսումնավարժություններին ու հավաքներին:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ համատեղ իրականացրել է ՀՀ Կոտայքի, Լոռու և Արագածոտնի մարզերի, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատմանը:

ՀՀ Շիրակի մարզում ցուցաբերել է մեթոդական և գործնական օգնություն մարզային քաղաքացիական պաշտպանության ինժեներականան ծառայությանը:

Համակարգել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում 2017 ուսումնական տարում ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի համակարգի ղեկավար աշխատողների և մասնագետների մասնակցությունը դասընթացներին:

Մշակել և համաձայնեցրել է ՀՀ պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունների հետ ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանը:

Մասնակցել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Դիլիջանի ուսումնական կենտրոնի վերակառուցման նկատմամբ որակի տեխնիկական և հեղինակային հսկողություն սահմանելու գործընթացին:

Մասնակցել է ՀՀ Արմավիր մարզի Էջմիածին համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու քննարկումներին:

Իրականացրել է գործառույթներ՝ սահմանված Հայաստանի Հանրապետությունում գաղտնիության ռեժիմն ապահովելու վերաբերյալ հրահանգով:

Շահագործել է «Արաքս-3 PCI» հատուկ նշանակության աշխատատեղը:

ԱՅԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

Նախապատրաստվել և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնեցմանն է ներկայացվել քաղաքացիական ծառայության 36 պաշտոնի անձնագրի նախագիծ, որոնք սահմանված կարգով հաստատվել են, իսկ 56 պաշտոնի անձնագրում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 11 մրցույթ:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքներ՝ 12 քաղաքացիական ծառայողներ վերապատրաստվել են:

Քարտուղարությունում մուտքագրվել է 10283 գրություն, ելքագրվել է 5432 գրություն:

Ձևակերպվել է նախարարի ստորագրած 122, աշխատակազմի ղեկավարի ստորագրած 104 հրամաններ:

Քննարկվել է քաղաքացիների 506 դիմում, որից 166-ը՝ բնակարանային, 47-ը՝ շինարարական, 69-ը՝ աշխատանքային, 6-ը՝ կենսաթոշակային, 12-ը՝ օրենսդրական, 9-ը՝ ֆինանսական և 197-ը՝ այլ բնույթի:

ՀՀ կառավարություն է ներկայացվել 23 որոշման նախագիծ, որից 12-ն ընդունվել է որպես կառավարության որոշում, 1-ը՝ արձանագրային որոշում, 8-ը՝ ՀՀ վարչապետի որոշում:

Կազմակերպվել և անցկացվել է Կոմիտեի նախագահի և տեղակալների, աշխատակազմի ղեկավարի, Կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների և այլ պաշտոնատար անձանց մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ, ճեպազրույցներ, կոմիտեի գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ պատրաստվել են մամուլի հաղորդագրություններ:

Կազմակերպվել է Կոմիտեի գործունեության մասին հանրության իրազեկումը՝ մամուլի հաղորդագրությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, տեսա-ֆոտո նյութերի և այլ տեղեկատվական նյութեր պատրաստելու և տարածելու միջոցով:

Ամփոփվել է Կոմիտեի գործունեության ոլորտին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերը, պատրաստվել է օրվա մամուլի տեսությունը, որը mulberry համակարգով ներկայացվել է Կոմիտեի աշխատակիցներին:

Համակարգվել է Կոմիտեի պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկման աշխատանքները:

Կազմակերպվել է քաղաքացիների գրանցումը և ընդունելությունը աշխատակազմի պաշտոնատար անձանց մոտ և արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության աշխատակազմեր: